ՎԱՐԴԻԿՆԵՐԸ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՌՈՒՄԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐՈՒՄ

Դ. ՂԺՐԻԿՅԱՆ (Բուխարեստ)

Միջնադարյան Մոլդովայում կապրեին նաև հայեր։ Մեկնելով Խրիմեն և անցնելով Լեհաստանի կարգ մը քաղաքներեն, մանավանդ Լվովեն, անոնք եկան Մոլդովական իշխանության սահմաններուն մեջ, ուր զբաղեցան առևտուրով և, մանավանդ, տրանզիտի առևտուրով։ Ավատապետական Մոլդովայի առևտուրի առաջին շրջանին հայերը զգալի դեր են ունեցած։ Իրենց առևտուրով, անոնք իրենց մասնակցությունը բերին կարգ մը ավաններու և քաղաքներու զարգացման։ Հայերու թիվը համեմատաբար մեծ ըլլալով, Մոլդովայի քանի մը քաղաքներու մեջ անոնք վայելեցին ինքնավարություն քաղաքատեսչության տեսակետով, ունենալով իրենց սեփական քաղաքապետերը երկրի մայրաքաղաք Սուչավայի, ինչպես նաև Սիրեթ, Բրըլադ և Վասլույ քաղաքներուն մեջ։

Ամուր կապեր պահելով Լվովի հայերուն հետ, Մոլդովայի հայերը ստեղծեցին նոր ճամփա մը (մոլդովական ճամփա), որ կկապեր Լվովը Սև ծովի հյուսիս-արևմտյան ափերուն հետ և որ ուներ երկու ուղղություն. առաջինը Լվով—Դորոհոյ—Բրըլադ—Գալաց և երկրորդը՝ Լվով—Աղքերման (ռումանեերեն՝ Զեթաթեա Ալպը) կամ Լվով—Քիլիա։ Սև ծովի այս նավահանգիստներուն մեջ հայերը ունեին իրենց առաղաստանավերը, որոնք ապրանքները կտանեին ավելի հեռուները։ Երբ 1484-ին թուրքերը գրավեցին այս երկու նավահանգիստները, առևտրական այս ճամփան շարունակվեցավ դեպի հարավ՝ Սիլիստրայեն մինչև Կ. Պոլիս։

Ինչպես Լեհաստանի հայերը, այնպես ալ Մոլդովայի հայերեն ոմանք, որովհետև լավ ծանոթ էին Մոլդովայի հյուսիսային կողմը խոսվող լեզուներուն և թուրքերենին, սկսան բացի առևտուրեն ուրիշ տարբեր պաշտոններ ևս վարել։ Ծանոթ են անունները շարք մը հայերու, որոնք թարգմանի պաշտոն են վարած լեհական կամ թուրքական դիվանագիտական պատգամավորության կողքին։ Այս ճամփուն հետևելով, Մոլդովայի մեջ ալ հայերեն ոմանք կսկսին բարձրանալ ավատապետական հասարակակարգի աստիճանները։ Այս հայերուն մաս կկազմեն նաև Վարդիկ ընտանիքի անդամները, որոնք երկար ժամանակ բավական դեր են ունեցած Մոլդովայի մեջ։

I. ՎԱՐԴԻԿՆԵՐԸ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վարդիկներու հայ ծագումը կվկայե Նիքոլայե Յորգա[1]։ Մեծ գիտնականը կհայտնե, թե Վարդիկ կամ Վարդիկովիչ անուններով բազմաթիվ հայեր կային։ Լվով։ XVII դարու վերջավորության, վավերաթուղթի մը մեջ, 1694-ին կհիշվի

[1] Documente privitoare la Istoria romînilor (1517—1612) culese de Hurmuzaki, adunate, adnotate şi publicate de N. Iorga, հատ. XI, էջ XXIX (այսուհետև՝ Hurmuzaki).

ումն Vartic arman (Վարդիկ հայր)[2]։ Ուրեմն իրենց Մոլտովա հաստատվելն երկու դար հետո, Վարդիկները կնշվին փաստաթուղթերու մեջ որպես հայ։

Վարդիկներու անունը կսերի վարդ բառեն, ինչպես՝ Վարդան, Վարդգես, Վարդանուշ, Վարդերես և այլ անուններու։ Լեհաստանի մեջ Վարդիկին ավելցած է ովիշ վերջավորություններ։ Շատ հավանական է, որ Լվովի այս Վարդիկներեն ճյուղ մը Մոլտովա անցած և այստեղ հաստատված ըլլա։

Վարդիկները արագորեն դրավեցին Մոլտովայի իշխաններուն վստահությունը։ Անոնց մասին առաջին տեղեկությունները կգտնենք XVI դարու սկիզբին։ Մոլտովայի Շթեֆան իշխանը (1517—1527) կվավերացնե մեղվաբուծարանի մը վաճառումը Փեթրու (Պետրոս) Վարդիկի կողմե[3] (հայտնի է, որ միջնադարյան Մոլտովայի մեջ, ինչպես ամբողջ Ռումանիոյ մեջ, հինեն ի վեր մեղվաբուծությունը շատ զարգացած էր)։ Վավերաթուղթին մեջ կհիշվի, որ սույն մեղվաբուծարանը Պետրոս Վարդիկ ուներ Շթեֆան իշխանի հայր Բոգդանեն (1504—1517)։ Պետք է ուրեմն եզրակացնել, որ Վարդիկները հաստատվեցան Մոլտովա հավանաբար XV դարու վերջին տասնամյակներուն և անոնց վերելքը սկսավ XVI դարու առաջին տարիներուն։ Որպես ապացույց կհանդիսանա այն հանգամանքը, որ կհիշվի նաև Պետրոս Վարդիկի հայրը՝ Վարդիկ, առանց անձնանունի, որ դիաք էր (իշխանական դիվանատան մեջ դպիր)։ Իր զավակը՝ Պետրոս Վարդիկ, շատ կարևոր պաշտոններ վարած է Մոլտովայի մեջ։ Մեծ թիվով վավերաթուղթեր կհիշատակեն իր անունը և պաշտոնները։ Այսպես, 1539-ին Պ. Վարդիկ կհիշվի որպես Սուչավայի փրբբրլար (բարձրագույն պաշտոնյա, որ կկառավարեր որոշ շրջան մը, միաժամանակ բերդի հրամանատար ու դատավոր) և հաթման (զորքի ընդհանուր հրամանատար)[5]։ Փեթրու Բարեշ իշխանը, որ Պ. Վարդիկիս շնորհած էր այս պաշտոնները, Մոլտովայի իշխան եղած է երկու անգամ (1527—1538 և 1541—1546 տարիներու ընթացքին)։ Պետրոս Վարդիկ այս բարձրագույն պաշտոնները ստացած է իշխանի երկրորդ անգամ գահ բարձրանալուն։ Ժամանակակից փաստաթուղթերու մեջ շատ անգամ կգտնենք Պ. Վարդիկի անունը։ Պ. Վարդիկ մեռավ 1548 թ. սեպտեմբերի 7-ին, սպանված Փեթրու Բարեշի որդի Իլիաշ իշխանի կողմե[6]։ Սպանման քաղաքական պատճառներուն վրա պիտի անդրադառնանք ավելի վարը։

Պետրոս Վարդիկի որդին, Յուրաշքու Վարդիկ, ինքն ալ պաշտոններ վարած է Մոլտովայի իշխանապետության մեջ։ Իր ունեցած պաշտոններուն մասին առաջին ակնարկությունը կգտնենք 1575 թ. կրող փաստաթուղթի մը մեջ։ Պետրոս Կաղը իշխանի օրով (1574—1577), երբ ունեցած է չաշնիքի պաշտոնը (իշխանի մատուակ)[7]։ Տարի մը ավելի ուշ ան կստանա փոստելնիքի

[2] Surete şi izvoade (documente slavo-romine) publicate de Gh. Ghibanescu, հատ. XV, էջ 104 (այսուհետև՝ Gh. Ghibanescu).

[3] M. Costachescu, Documente moldoveneşti de la Ştefaniţa Voevod (1517—1527), Iaşi, 1943, էջ 478—483։

[4] Gh. Ghibanescu, հատ. XXII, էջ 114 և M. Costachescu, նշվ. աշխ., էջ 268—269։

[5] Grigore Ureche, Letopisetul Ţării Moldovei, editat de P. P. Panaitescu, Ediţia a II-a, Bucureşti, 1958, էջ 163։

[6] Նույն տեղում, էջ 167։

[7] Teodor Balan, Documente Bucovinene, հատ. I (1507—1653), Cernauţi, 1933, էջ 73 և 75։

պաշտոնը (արքունիքի ընդհանուր հոգատար—արքունիքի մարաջախտ և իշխանի ննջասենյակի հոգատար)։ Այս պաշտոնը Յուրաշքու Վարդիկ կվարև 1576—1579 տարիներու ընթացքին[8]։ 1579-ին Յ. Վարդիկ ավելի մեծ պաշտոն մը կստանա և կնշանակվի Հոթին բերդի փրբքրլաբ[9]։ Բարձրանալով ֆեոդալական իրավակարգի այս աստիճաններեն, 1581-ին Յ. Վարդիկ կգրավե Մոլտովայի մեծագույն պաշտոնը՝ dvornic al Tarii de jos (Մոլտովայի կեսը իր հսկողության տակ ունեցող բոյար. ան առաջին դեմքն էր իշխանապետության մեջ իշխանեն հետո)։ Յ. Վարդիկ վարած է այս պաշտոնը 1581—1592 տարիներու ընթացքին[10], Յանքու Սասու (1579—1582), Պետրոս Կարը, որ երրորդ անգամ բլլալով գահ կբարձրանար (1582—1591) և Արոն (1591—1591) իշխաններու ժամանակ։ Սույն իշխաններեն մնացած փաստաթուղթերուն մեջ, որոնք ստորագրված են ավագանիի կողմից, Յ. Վարդիկի ստորագրությունը կգտնենք առաջինը, իշխանի և իր զավակներու ստորագրություններեն վերջ։

Մոտավորապես մեկ դարու ընթացքին Վարդիկները բարձրացան Մոլտովայի իշխանապետության աստիճանները և գրավեցին կարևոր պաշտոնները շնորհիվ իրենց ցուցաբերած արժանիքներուն, հավատարմության և դիվանագիտական հատկությանց։ Հաջորդող XVII դարու ընթացքին սակայն, Վարդիկները սկսան կորսնցնել իրենց նշանակությունը։ Թեև անոնք կշարունակեն գրավել զանազան պաշտոններ Մոլտովայի մեջ, բայց այս պաշտոնները շատ ավելի փոքր են քան անոնք, որ ունեցած են XVI դարու ընթացքին։ Ջանալով այս իրողության պատճառները գտնել պետք է նկատել հետևյալ պարագաները. հայերը, որոնք կապրեին Մոլտովայի մեջ և կզբաղեին առևտուրով, կտանեին հակաթուրքական քաղաքականություն մը, որովհետև թուրքերը կջանային ամեն գնով իրենց առևտուրը խափանել։ Թուրքերը կուզեին իրենք գրավել առևտրականներու դիրքերը և ավելի քան դիրքերը՝ անոնց հարստությունը։ Ահա թե ինչու Մոլտովայի հայ գաղութը և հայ առևտրականները ընդդիմացան թուրքական ազդեցության տարածման։ Պետրոս Վարդիկ եղավ, մասնավորապես, այս քաղաքականության ներկայացուցիչը, ինչ որ, ինչպես պիտի տեսնենք, իրեն արժեց իր կյանքը։ Պետք է նաև նկատել, թե առևտրականները և կրնանք ըսել մանավանդ հայ առևտրականներու դերը կսկսի աճիլ, որովհետև անոնք իրենց լեզուներ ճանչնալնուն շնորհիվ կսկսին նախ թարգմանի և հետո դիվանագիտական միջնորդի պաշտոն ստանալ, իսկ ավելի ուշ ներքին վարչության մեջն ալ կգրավեն բարձր դիրքեր։ XVI դարու ընթացքին առևտուրը իր բուռն աճման մեջ է, բայց թուրքերը կգրավեն Մոլտովայի Սև ծովի նավահանգիստները սույն դարու վերջավորության և այսպիսով կգոցեն առևտրական սովորական ճամփաները, որոնք կտանեին դեպի շուկաները կամ դեպի ապրանքներու ստացման վայրերը։ Ըստ մեր կարծիքի, այս է Վարդիկներու անկման պատճառը. երբ հայերը կարևոր դեր մը կխաղային Մոլտովայի տնտեսական կյանքին մեջ (XVI դար), Վարդիկներն ալ ճաշակեցին փառքի

[8] Gh. Ghibanescu, հատ. XIX, էջ 99—102 և 166—168։

[9] Նույն տեղում, էջ 177—120, 123—126, 126—129, 202—205։

[10] Նույն տեղում, էջ 154—157, 175—179, 182—195, 187—189, հատ. XX, էջ 1—3, 115—118, հատ. II, էջ 322—326։ Hurmuzaki, հատ. XI, էջ 232. Grigore Ureche, նշվ. աշխ., էջ 224։ T. Balan, նշվ. աշխ., հատ. II, Cernauți, 1934, էջ 38։

անուշ և երբեմն ալ լեղի համը։ Բայց XVII դարուն, երբ վերոհիշյալ պատճառներու հետևանքով կնվազի հայերու դերը, Վարդիկներն ալ կդրավեն ավելի փոքր պաշտոններ։

Վարդիկ ընտանիքի ուրիշ անդամ մը, Թեոդորաշքու Վարդիկովիչ, որուն ծնողքը կամ ընտանեկան հարաբերությունները մեզի անծանոթ կմնան, 1660-ին հայտնի է որպես Սորոյա քաղաքի փրբբրյար[11]։ Այստեղ կանգ կառնենք Վարդիկներու հիշատակումով, թեև բազմաթիվ փաստաթուղթեր կան XVII—XVIII դարերեն, որոնց մեջ հիշված է անոնց անունը։ Պետք է միայն հիշենք, որ իգական գծով Վարդիկ ընտանիքեն աղջիկ մը կինը եղած է Միրոն Բարնովսքի իշխանին (1626—1629)։ Խոսքը վերը հիշված Գավրիլ Վարդիկի (Տուրուշքու Վարդիկի երեք զավակներեն մին) աղջկա՝ Անթիմիայի մասին է[12]։ Վերջին, ընտանիքի պատկանող ուրիշ աղջիկ մը Ալեքսանդրու Յոն Քուզա իշխանի կինը եղած է (1859—1866)։

Վարդիկներու անունով Մոլտովայի մեջ գոյություն ունեցած են նաև երկու գյուղեր. Վարդիշ[13] և Վարդիքրուց՝ առաջինը հիշված 1766-ին, իսկ երկրորդը 1587-ին, վավերաթուղթերու մեջ։

2. ՎԱՐԴԻԿՆԵՐԸ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՏԱՄՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Վարդիկներու ընտանիքեն անդամ մը դարձած է հերոսը ռումանական քանի մը ժողովրդական երգերու։ Այս երգ-բալլադները մեծ տարածում ունեցած են ժողովրդի մեջ։ Մեր դարու սկզբին ֆոլքլոր հավաքող գանազան անձեր գրի են առած սույն երգերը, որոնք գտնված են Մոլտովայի սահմաններուն շատ հեռու։ Այսպես՝ գտնված են Արճեշ, Բանաթ և Ռումանաց շրջաններուն մեջ։

Բալլադի բովանդակությունը հետևյալն է, իհարկե, ընդհանուր գիծերով, որովհետև փոքր փոփոխություններ կան յուրաքանչյուրին մեջ։ Երբ իշխանը որսի դացած էր, Իլեանա իշխանուհին կջանա մոլորեցնել ու հրապուրել իշխանի խորհրդական Վարդիշ բոյարին, որ իր սանն էր, տարփական առաջարկներ ընելով անոր։ Սարսափած, Վարդիշ պատրվակով մը կհեռանա, տունը, կինը և զավակները լքելով կդառնա պանդուխտ։ Զայրացած, վրեժը լուծելու սպատակով, իշխանի վերադարձին Իլեանա կմատնե Վարդիշը, ըսելով թե ան փորձած է կրքով մոտենալ իրեն։

Հավատալով իր կնոջ զրպարտություններուն, իշխանը բռնել կուտա փախուստական բոյարը և կպլխատե զայն, թեև այս վերջինի կինը ջերմորեն կխնդրե ամուսնի կյանքը։ Ամուսնին դիակին քով անձնասպան կըլլա նաև իր կինը։ Իրենց գերեզմանին վրա կրուսնին երկու միացյալ վարդենիներ։ Ահա բալլադը ռումաներենով և հայերեն թարգմանությամբ.

[11] Documente privitoare la Istoria lui Mihai Viteazul, publicate de P. P. Panaitescu, Bucureşti, 1936, էջ 136—137։

[12] Gh. Ghibanescu, հատ. XXII, էջ 114։

[13] Hurmuzaki, հատ. XVI, էջ 213։

[14] Gh. Ghibanescu, հատ. V, էջ 334։

Foaie verde salba moale,
Cînd fuse vinerea mare,
Pleca Voda-n vanatoare.
'N vanatoare ca plecase
Doamna singura ramase.
Dară Doamna ce-mi făcea?
Tot la, frate, ca-mi chema
Douasprezece jupanese,
Ia vezi, tot cocoane-alese
Si la masa le punea,
Mare gurban ca facea.
Cu paharu-cin-le da?
Savăi, fina-sau Vartici
Si mi-si bea
Si mi-si mînca.
Dara Doamna ce-mi facea?
Tot ia Vartici se uita,
Bine seama ca i-o lua.
Dar cind fu dupa cinare,
Dupa dalba capatare,
Semn lui Vartici ca facea
Pe jupanese a-mi cara.
Tot cu butca le cara,
Tot prin case poleite.
Cu sticla acoperite.
Si p-acasa le ducea,
Numai Vartici raminea.
Asa Doamna ce-mi zicea?
„Alelei, fine Vartici,
Vino linga mine-aici
Din ceasu' ce te-am vazut,
La inima mi-ai cazut.
Alelei, fine Vartici,
Vino linga mine-aici
Că-mi esti nalt si sprincenat,
Cu trei semne de varsat
Si dulce la sarutat
Dara Vartici ce-mi zicea?
„Alelei, naşa Ileana,
Nu ti-a fi nasă păcat
Ca de mic m-ai botezat,
De mare m-ai cununat,
Nu ti-a fi, nasa, pacat
Sa cădem la sarutat?
Aşa, Doamna ce-mi zicea?
„Alelei, fine Vartici,

Փափուկ իլենիի կանաչ տերև,
Ի օրն ավադ ուրբաթի,
Գնաց իշխանը որսի։
Որսի երբ երթար
Իշխանուհին մինակ կմնար։
Իսկ իշխանուհին ի՞նչ կրներ.
Ինքը կկանչեր
Տասներկու տիկիններ,
Բոլորն ալ ընտիր կիներ
Եվ սեղանի կդներ,
Եվ մեծ խուրպան կրներ։
Եվ դավաթները ո՞վ կլեցներ։
Նույն ինքն իր սանը Վարդիչ
Եվ կուտեին
Եվ կխմեին։
Բայց իշխանուհին ի՞նչ կրներ։
Միշտ Վարդիչին կնայեր,
Լավ ուշադրություն կրներ։
Եվ երբ ընթրիքին վերջն էր,
Վարդիչին նշան կրներ,
Որ տիկինները տուն տանի։
Միայն կառքով կտաներ,
Զարդավորված տուներու մեջ,
Ապակիով ծածկված։
Եվ տուն կտաներ
Վարդիչը միայն կմնար։
Եվ իշխանուհին ի՞նչ կրսեր.
«Ա՜յ, իմ սանիկս Վարդիչ,
Եկուր քովս այստեղ։
Այն պահեն որ քեզ տեսա,
Իմ սրտիս դուն դուր եկար։
Այ սանս Վարդիչ,
Եկուր քովս մոտիկ,
Դուն բարձր ես ու հոնքավոր
Ծաղիկի երեք նշաններով
Եվ շատ անուշ կհամբուրես»։
Բայց Վարդիչ ի՞նչ կրսեր։
«Այ կնքամայր Իլեանա
Միթե մեղք պիտի չըլլա՞
Պզտիկուց գիս կնքեցիր,
Մեծնալով ամուսնացուցիր,
Միթե մեղք պիտի չըլլա՞ր
Որ սկսինք համբուրվիլ»։
Իսկ իշխանուհին այսպես կրսեր։
«Այ սանս Վարդիչ,
Եկուր քովս մոտիկ։

Vino lînga mine-aici.
Pentru pacatele tele.
Da-oi averile mele.
Face-oi multe manastiri,
Sa fie de pomeniri.
Ş-oi mai face fîntîni reci
Pe la drumuri si poteci,
Ş-oi da vaci p-e la saraci,
S-oi marita fete mari".
Dara Vartici ce zicea?
„Alei, nasa lleana,
Mai asteapta putintel,
Sa-mi îmbrac cel caftanel
Ca ma prinde bine-n el„.
Asa, Vartici ce-mi facea?
Acasa mi se ducea,
Grajd de piatra descuia,
Si pe negru mi-l scotea
Si la scara mi-l lega,
Apoi în casa-mi intra,
Sotia si-o saruta,
Coconi-si îmbratisa,
Si asa Vartici ca-mi zicea:
„Draga mea de coconi-ta,
Ai sa ramîi vaduvita:
Dragii mei de coconasî,
Raminetl de mici saraci".
Dar Varticl ce-mi mai facea?
El afara ca-mi ieşea,
Pe negru încăleca,
Si el, mare, că-mi fugea,
Tocma, frate-n Taligrad,

Ca sa scape de pacat.
Da' Vartici daca fugea,
Doamna tare se-ntrista.
Si pornea de bolnavea.
Steian Voda ca-mi venea,
Din vanatoare-mi venea,
Si pe Doamna o întreba,
Si prindes de-o ispitea.
Asa, Doamna ce-mi spunea?
Tot pe Varticl ca-mi pîra.
Cu pîra inveninata
Si cu inima spurcata.
Stefan Voda-mi auzia.
Palmela la ochi punea,

Քու մեղքերուդ համար
Հարստութիւնս պիտի տամ։
Շատ վանքեր պիտի շինեմ,
Որպեսզի հիշատակ մնան։
Ջրհորներ պիտի շինեմ
Ճամբաներու և արահետներու վրա
Աղքատներուն կովեր պիտի տամ,
Եվ աղջիկներ պիտի պսակեմ»։
Բայց Վարդիչը ի՞նչ կրսեր։
«Ա՜յ, կնքամայրս Ղլեանա,
Սպասե քիչ մը դեռ,
Որ հագվիմ վերարկուս,
Որ իմ վրաս լավ կուգա»։
Այսպես Վարդիչ ի՞նչ կրներ։
Անմիջապես տուն կերթար,
Քարե ախոռը կբանար,
Սև նժույգը կհաներ,
Ասպանդակը կկապեր,
Հետո տունեն ներս կմտներ.
Իր կինը կհամբուրեր,
Զավակները կգրկեր,
Եվ Վարդիչ այսպես կրսեր։
«Սիրելի իմ տիկինս,
Պիտի մնաս դուն այրի.
Սիրելի իմ զավակներս
Պզտիկուց աղքատ կմնաք»։
Եվ Վարդիչ ի՞նչ կրներ։
Ան տունեն դուրս կելլեր,
Սև նժույգին վրա կհեծներ,
Եվ ան արագ կփախչեր,
Ճիշտ մինչև Ցարիգրադ,
Որպեսզի մեղքի չմտնե։
Բայց երբ ան կփախչեր,
Իշխանուհին շատ կտխրեր,
Եվ կսկսեր հիվանդանալ։
Շթեֆան իշխանը երբ կուգար,
Որսեն երբ կվերադառնար,
Իշխանուհին կհարցներ,
Եվ զայն փորձել կսկսեր։
Եվ իշխանուհին ի՞նչ կրսեր։
Վարդիչին ան կմատներ։
Մատնությամբ թունավոր
Եվ սրտով արատավոր։
Շթեֆան իշխան երբ կիմանար
Զեռքը աչքին կդներ,
Վարդիչը փնտրելու կխրկեր

Dupa Vartici trimetea
Si—îndarat ca-l aducea!
Stefan Voda ce-mi facea?
El, frate, ca-mi aduna
Boierii divanului,
Caimacamii tirgului,
Toti sfetnicii sfatului,
Pe Vartici mi-l judeca
Tot lui vina ca-i gasea.
Dar soția lui Vartici
Cu coconasii cei mici,
Fuga la Voda ca-mi da,
Si din gura asa-mi graia:
„Nasule, maria ta,
Ja nu te mai gîndura
Si nu mi-l mai spînzura".
Stefan-Voda ce-mi zicea?
„Fina finisoara mea,
Ja, nu te mai gîndura,
Pe Vartici d-oi spînzura.
Coconii orasului.
Caimacamii tîrgului,
Sfetnicii Divanului
Care tie ti-o placea,
Dupa ala mi te-oi da
Si tot eu te-oi cununa".
Foaie verde s-o lalea,
Stefan-Voda poruncea
Pe Vartici de-mi spînzura
'N gradina cu florile,
Und 'se plimba doamnele,
Doamnele cu roabele.
Cînd rasare soarele.
Dar soția lui Vartici,
Cînd spînzurat mi-l vedea,
Fuga în casa ca-mida,
Mîna pe hamger punea,
Si singură se junghea
Cu Vartici alaturea.
I-amindoi că-i îngropa
'N gradina cu flori
Und' se plimba doamnele,
Doamnele cu roabele,
Cînd rasare soarele,
Stefan Vodă ce-mi facea?
Prin gradina se uita

Եվ երբ զայն կբերեին,
Շթեֆան իշխանը ի՞նչ կրներ։
Ան կհավաքեր
Դիվանի բոյարները,
Ավաններու տեսուչները,
Խորհրդի անդամները,
Եվ Վարդիկը կդատեին
Հանցավոր կդտնեին։
Բայց կինը Վարդիչին
Իր փոքրիկ զավակներով,
Արադ կվազեր իշխանին
Եվ բերնով այսպես կրսեր.
«Իմ կնքահայր դու իշխան,
Այդքան մի մտածեր,
Եվ ամուսինս մի կախեր»
Շթեֆան իշխան ի՞նչ կրսեր.
«Սանս դու իմ փոքրիկ,
Այդքան մի մտածեր,
Թե որ Վարդիչը ես կախեմ։
Քաղաքի պարոններեն,
Ավաններու տեսուչներեն,
Դիվանի խորհուրդեն
Ով որ քեզի դուր գա,
Ան քուկդ պիտի ըլլա
Եվ անով քեզ կպսակեմ»։
Կակաչի կանաչ տերև,
Շթեֆան իշխան կհրամայեր,
Եվ Վարդիչը կկախեր
Ծաղկազարդ պարտեզին մեջ,
Ուր կճեմեն տիկինները,
Տիկինները իրենց ճորտուհիներով
Երբ կծագի արևը։
Բայց կինը Վարդիչին,
Երբ մեռած կտեսներ զինք,
Շուտ տուն կվազեր,
Դաշույնը ձեռք կառնել,
Եվ ինքզինքը կսպաններ
Վարդիչի ներկայության։
Երկուքին ալ կթաղեին
Ծաղկազարդ պարտեզին մեջ,
Ուր կճեմեն տիկինները,
Տիկինները իրենց ճորտուհիներով..
Երբ կծագի արևը։
Շթեֆան իշխանը ի՞նչ կրներ։
Պարտեզին մեջ կնայեր
Երկու վարդենի կտեսներ

Doi trandatiri ca-mi zarea
De mijloc învîlcinati,
De vîrfuri apropiati,
Tocmai zau, ca niste frati.
Stefan-Voda de-mi vedea,
La inima se-nmuia,
Lacrimile-l podidea
Si din gura asa graia:
„Cine strica drgostea;
Dumnezeu sa nu i-o dea;
Sa i-o dea si sa i-o ia,
Ca sa creaza altuia"[15].

Իրարու փաթթված,
Ու անբաժան միացած,
Կարծես բլան եղբայրացած։
Շթեֆան իշխան երբ կտեսնար,
Իր սիրտը կկակուղնար,
Արցունքները կուգային
Եվ այսպես կարտասաներ.
«Ով որ սերը կը ավրե
Աստված անոր սեր չտա.
Կամ թող տա և թող առնե
Որպեսզի ուրիշին հավատա»։

Արդ տեսնենք, թե ինչպես կպահպանեն այս և մյուս բալլադները պատմական ճշմարտություններ։ Նախ ո՞վ են անձերը։ Վարդիկ անունով անձը Պետրոս Վարդիկն է, որուն մասին վերը խոսվեցավ։ Շթեֆան իշխանը, Շթեֆան Բարեշ Մոլտովայի իշխանն է (1551—1552) Փեթրու Բարեշ իշխանի որդին, իսկ Իլեանան Փեթրու Բարեշի կինը և Շթեֆան Բարեշի մայրն է։ Վարդիկի կնոջ մասին տեղեկություններ չենք գտած վավերաթուղթերու մեջ։

Սկսինք Իլեանա իշխանուհիով։ Իլեանա կամ Ժելենա իշխանուհին Բրանքովիչներու սերպ ընտանիքեն էր։ Բրանքովիչ ընտանիքը սերտ կապեր ուներ Թուրքերու հետ, իսկ Ջորջի Բրանքովիչի (1427—1456) դուստրը՝ Մարա, Սուլթան Մուրատ Բ-ի (1421—1451) կինը եղած է։ Մարա՝ Իլեանայի մորաքույրն էր։ Իր ընտանեկան կապերուն բերումով Իլեանան թուրքասեր քաղաքականություն կտաներ և կջանար մոտենալ թուրքերուն։ Ալեքսանդրու Լափուշնեանու իշխանը (1552—1561) կսպաննե Իլեանա իշխանուհին և անոր դուստրը Ռուքսանդա, կնության կառնե։

Պետրոս Վարդիկ, ընդհակառակը, հակաթուրքական քաղաքականություն կտաներ և ամեն գնով կջանար հարևան երկիրները գրգռել ու պատերազմի հանել թուրքերու դեմ։ Մասնագիտական գրականության մեջ ծանոթ են կարգ մը տվյալներ, որոնցմե կարելի է եզրակացնել, որ Պետրոս Վարդիկ քրիստոնյա մյուս երկիրներուն կհաղորդեր թուրքերու շարժումներն ու մտադրությունները։ Ահա հատված մը վավերաթուղթե մը, որ կգտնվի Վիեննայի արխիվին մեջ, որմե կարելի է տեսնել, թե Պ. Վարդիկ թրանսիլվանիացիներուն կհաղորդեր թուրքերու պատերազմի ծրագիրը և թե ինչ առավելություններ պիտի ունենան քրիստոնյաները, եթե անոնց դեմ պատերազմ սկսին։

«...si quid principes Christiani expedire volunt contra Turcas (պետք է բլլա Turcos), nunc habent tempus commodissimum, ne que posthac melius habebunt. Nunc, nunc insurgendum est principibus Christianis, ut vadant Budam expugnaturi et eam demoliendo in Danubium ruinas eius demergant, quia si Turci eam fortificabunt, tunc eos nunquam expellant Christiani"[16].

[15] Balade, adunate de C. N. Mateescu, cu o prefata de N. Iorga, Valenii de Munte, 1909, էջ 29—34.

[16] Hurmuzaki, հատ. II, մաս I (1451—1575), էջ 240։

Ահա և թարգմանությունը.

«Եթե քրիստոնյա իշխանները կուզեն թուրքերու վրա հարձակիլ, հարմարագույն ժամանակը հիմա ունին—այնպես ինչպես ավելի լավը ավելի ուր չպիտի ունենան։ Պետք է քրիստոնյա իշխանները հիմա ոտքի ելլեն, առաջանան Բուդա-յի վրա գրավելու համար դայն և քանդելով, ավերակները Դանուբի մեջ ընկղմեն, վասնզի եթե թուրքերը ամրացնեն դայն, այն ժամանակ երբեր քրիստոնյաները չպիտի վտարեն (թուրքերուն)»։

Փաստաթուղթը գրված է Պ. Վարդիկի կողմե և կկրե 1542 տարեթիվը։

Ուրիշ վավերաթուղթե մը կարելի է նույնպես եզրակացնել, որ Պ. Վարդիկ թրանսիլվանիացիներուն կհաղորդեր գաղտնի տվյալներ թուրքերու մասին, մանավանդ որ ան՝ բանակի ընդհանուր հրամանատարն էր և իր պաշտոնին բերումով տեղեկություններ ուներ թուրքերու ուժի և մտադրության մասին։ Այս վավերաթուղթը 1547 թ. մայիսի 25 թվականը կկրե[17], ուրեմն գրված է Վարդիկի մահեն մոտավորապես տարի մը առաջ։

Ինչպես ըսինք, պատմական աղբյուրներե գիտենք, որ Պ. Վարդիկ սպանված է Իլիաշ Բարեշ (1546—1551) իշխանի կողմե, որ Իլեանայի և Փեթրու Բարեշ իշխանի զավակն էր (եղբայրը բալլադի մեջ գտնվող Շթեֆանի)։ Իլիաշ Բարեշ Հանոթ էր որպես շվայտասեր ու անառակ կյանք մը տանող. ան վերջացուց իր կյանքը մահմեդական կրոնքին անցնելով։ Իր եղբայրը՝ Շթեֆան, հոգեպես հիվանդ, ռումեն պատմագիրներու կողմե նկարագրված է որպես կես խենթ։ Ինք միակ իշխանն է, որու իշխանության ընթացքին հայերը հալածվեցան Մոլտովայի մեջ, հալածանքներ, զոր երգեց ականատես հայ բանաստեղծ մը, Մինաս Թոխաթեցին։ Իլեանա իշխանուհին չէր կրնար անտարբեր մնալ իր որդիներուն գործած ոճիրներուն հանդեպ, այլ ալ ավելին, կրնանք ըսել, թե տրված բլլալով երկու որդիներուն թեթևամտությունը, ինքը անձամբ ազդած ու զեկավարած է զանոնք, անոնց ներշնչելով թուրքասիրությունը, որ միայն իրենց մորմեն կրնային ժառանգել։ Հանուն այս թուրքասիրության, Իլիաշ կսպաննե Պ. Վարդիկը, երբ կհաստատե թե ան կապեր ունի քրիստոնյա հարևաններու հետ և թուրքերու հակառակ կգործե։ Իսկ այս սպանման մեջ շատ հավանական է, որ Իլեանան ալ խառնված բլլա, եթե ոճիրի ուղղակի ներշնչողը ինքը չէ։

Որպես ապացույց, որ Վարդիկ սպանված է այն վայրկյանին, երբ հայանաբերված են քրիստոնյաներու հետ ունեցած իր կապերը, կծառայե այն հանգամանքը թե նույն Իլիաշի իշխանության ժամանակ Պետրոս Վարդիկ շարունակած է գրավել զորքի ընդհանուր հրամանատարի պաշտոնը։ Այսպես, 1548 մարտ 1 և 6 և ապրիլ 5 թվականները կրող վավերաթուղթեր կկրեն Պ. Վարդիկի ստորագրությունը որպես զորքի հրամանատար[18]։ Ուրեմն իր մահեն երկու օր առաջ (1548 ապրիլ 7) Պետրոս Վարդիկ տակավին կվարեր իր պաշտոնը, ինչ որ բավականաչափ կապացուցանե թե քաղաքական պատճառներով սպանված է։

Պատմական այս մեջբերումը բրինք հաստատելու համար, որ բալլադը մեջ Իլեանային վերագրված սիրային խանդը չէ պատճառ եղած Պետրոս Վարդիկի մահվան, այլ քաղաքական լուրջ հանգամանքներ։ Բայց ստույգ է, ինչ-

[17] Hurmuzaki, հատ. XV, մաս I, էջ 461—462։
[18] Gh. Ghibanescu, հատ. XIX, էջ 3—6, 6—7, 199—201։

պես կտեսնենք նաև ժողովրդական երգին մեջ, որ Վարդիկի սպանման եթե ոչ բուն հեղինակը, գոնե մոտեն ազդողը եղած է Իլեանան, Իլիաշի մայրը։

Բալլադի բովանդակութենեն տեսանք թե եղելությունները սկսած են ավագ ուրբաթ օրը, իսկ պատմական տվյալներեն հայտնի է, թե Պ. Վարդիկ սպանվեցավ շաբաթ օր գատկեն վերջ։ «Իր իշխանություն օրով (Իլիաշ) շաբաթ օր գատկեն վերջ, հաթման Վարդիկի գլուխը կտրեց Հուշ քաղաքին մեջ և տարին Թաղեցին զինքը Փորբաթա վանքին մեջ 7056 ապրիլ 7-ին (1548 ապրիլ 7)»[19]։ Կնկատենք, որ թե՛ բալլադի բովանդակութենեն և թե՛ պատմական տվյալներեն Պ. Վարդիկի սպաննումը տեղի ունեցած է գատկի օրերուն շուրջ, ինչ որ կապացուցանե բալլադի պատմական վավերականությունը։

Նույն բովանդակությունը ունեցող ուրիշ բալլադ մը կիմանանք, որ Վարդիկ ուներ երեք զավակ, երկու աղջիկ ու մանչ մը։

Trei copii mi-am cistigat:	Երեք երեխա ես ունեցա
Doua fete si un baiat,	Երկու աղջիկ ու մեկ տղա,
Pe toti trei i-ai creştinat,	Երեքն ալ քրիստոնյա ըրիր
Parul i le-ai retezat,[20]	Մազերնին դուն կտրեցիր
Bre nasa, n-o fi pacat?	Կնքամայր միթե մեղք չէ՞։

Մեր քննած վավերաթուղթերեն հայտնի չէ թե քանի զավակ ունեցած է Պ. Վարդիկ։ Գիտենք, որ Յուրաշքու Վարդիկեն զատ, որու մասին վերը անդրադարձանք, ուներ մանչ մը ևս, որ մեռած է 1583-ին առաջ։ Մյուս կողմեն ստույգ է, թե Յուրաշքու Վարդիկ ունեցած է երեք զավակներ.

«Աստծու խղճահարությամբ, մենք Երեմիա Մովիլը, իշխան Մոլտովայի այս մեր գիրով կծանուցանենք բոլոր անոնց որ պիտի կարդան կամ կարդացվելով պիտի լսեն, այսինքն այս մեզի իսկական հավատարիմ Լուփուլ Վարդիկ, մեծ արմաշ և իր եղբայր Դավրիլ Վարդիկ և իրենց քույրը Ասիսիա, փոսթելնիկ Յուրաշքու Վարդիկի զավակները, թոռները Փեթրու Վարդիկի, Սուչավայի Փորթար...»[22]։

Երեք եղբայրները կծախեն կալվածի մը կեսը։ Վավերաթուղթը 1598 փետրվարի 28 թվականը կկրե։

Այս վավերաթուղթերեն կտեսնենք, որ Յուրաշքու Վարդիկ ունեցած է երեք զավակ։ Ծրված ըլլալով բալլադի ծավալումը, դյուրավ կարելի է բացատրել շփոթությունը, որ տեղի ունեցած է Յուրաշքու Վարդիկի զավակներուն թիվը Պ. Վարդիկին վերագրելով։

Նշանակենք ուրիշ դեպք մը ևս։ Վարդիկի մահեն և իր կնոջ անձնասպանութենեն վերջ, իրենց գերեզմանին վրա կբուսնին երկու վարդենիներ, որոնց ճյուղերը իրարու կմիանան։ Ռումեն հետազոտող Ա. Բալոթը ուսումնասիրության մը մեջ[23] կհիշատակե թե բալքանյան շրջանին մեջ, ֆեոդալական շրջանակներու դավերեն բաժնված սիրականներու գերեզմանին վրա կբուսնին խաղողի տունկեր կամ կիպարիս, որոնք կմիանան իրենց ճյուղերով, իսկ

[19] Grigore Ureche, Letopiseţul Tarii Moldovei, Bucureşti, 1958, էջ 167։

[20] Literatura romineasca, adunata de Nicolae Pasculescu, Bucureşti, 1910, էջ 195—196։

[21] Hurmuzaki, հատ. XI, էջ XXX։

[22] Gh. Ghibanescu, հատ. XXII, էջ 112—114։

[23] Anton Balota, Funcţiunea socială a cîntecului batrinesc (Balada lui Vartici) „Revista de folclor" հանդեսի մեջ, № 2, 1958, էջ 101—112։

ռումեն բանահյուսության մեջ այդ դերեզմաններուն վրա կրուսնին խաղողի տունկեր, շաղապատուկ և եղևնի։ Ռումեն բանահյուսության մեջ միայնակ երևույթ է սիրականներու դերեզմանին վրա վարդ բուսնիլը։ Ա. Բալոթը կբացատրե այս դեպքը նկատի առնելով Վարդիկներուն հայ ծագումը և վարդ բառի իմաստը հայերենի մեջ։

Երբեմն նույն բովանդակությունը ունեցող ուրիշ բալլադի մը մեջ ակնարկություն կա Վարգիչի օտար ծագման մասին և միաժամանակ կվավերացվի, որ իշխաններու խորհրդակցեր եղած է։

Foaie verde dibomnic	Կաղնիի կանաչ տերև
De cind eram copil mic,	Երբեն ի վեր փոքր էի
Prin straini ca m-am nascut	Օտարներու մեջ ես ծնա
De straini parte-am avut.	Միայն օտարություն տեսա։
Slugulita ca m-am dus	Սպասավոր ես եղա
Pe mîna strinilor,	Օտարներու ձեռքին տակ
In coada taciunilor.	Կրակի և մոխիրներու մեջ
Simbrioara ce-am avut,	Իմ ունեցած ոճիկս
Numai Domnul mi-a stiut[24].	Միայն իշխանը գիտցավ։

Հարց կառաջանա, թե ինչպես կարելի է, որ բալլադ մը, որուն ամբողջ հերոսները ավատապետական աշխարհին կպատկանին, այնքան տարածված ըլլա ժողովուրդին մեջ։ Բացատրությունն այն է, թե այդ բալլադին մեջ դիմակազերծ եղած է ֆեոդալական կյանքի ստորին բարոյականությունը, հանձին Իլեանա իշխանուհիի։ Ուրիշ խնդիր մը ևս պետք է լուծել։ Ինչպե՞ս հասած է այս բալլադը ժողովրդին մեջ և այնքան մեծ շրջագայություն ունեցած է։ Հայտնի է, թե Ալեքսանդրու Լրփուշնեանու իշխանի օրով, և անկե ալ առաջ XV դարու ընթացքին, իշխանական պալատներու մեջ կային երգիչ-գուսաններ, որոնք խնջույքներու ատեն կերգեին բալլադներ ու երգեր[25]։ Սույն բալլադը ստեղծված է Ալեքսանդրու Լրփուշնեանուի պալատին մեջ իշխանական երգիչներու կողմե, իշխանի ուղղակի դրդումով և կամ միայն հավանությամբ, որ կուզեր իր գործած ոճիրի առարկա Իլեանա իշխանուհիի հիշատակը նսեմացնել։ Օգտագործելով իշխանական աղբյուրներեն առաջ եկած տեղեկություններ, մատենագրական տվյալներ, ինչպես նաև ժողովրդական բալլադներու ձևական բնորոշ հատկանիշները, պալատի մեջ գտնվող երգիչ գուսանները ստեղծեցին այս բալլադը, զոր կարտասանեին կոչունքներու միջոցին։ Երբ այլևս ան հետաքրքրություն չէր ներկայացներ ավատապետներուն և պալատի շրջանակներուն համար, գուսանները կրկնեցին զայն ժողովուրդին մեջ, ժողովրդական հանդիսությանց ու տոնակատարությանց առթիվ։ Այս ձևով ժողովուրդը յուրացուցած է սույն բալլադը, այս երևույթին հիմնական պատճառը ըլլալով այն, որ հանձին Իլեանա իշխանուհիին, ընդհանուր առմամբ ավատապետական ընկերության կինը ներկայացված է իր աննկարագիր և ամոթալի բարոյականությամբ։ Բալլադի տարածման պատճառներեն ուրիշ մեկն ալ այն է, որ ժողովուրդի հիշողության մեջ տակավին թարմ էին Փեթրու Բարեշի

[24] Alexandrina Istratescu, Etica populara în Argeş. „Grai şi suflet" հրատարակության մեջ, հատ. V/2, Bucureşti, 1931—1932, էջ 224—236։

[25] Anton Balota, նշվ. աշխ., էջ 107—108։

երկու որդիներուն գործած անարդարություններն ու կեղեքումները և ժողովուրդը արագորեն յուրացուց բալլադը, մանավանդ որ անոր էպիկական հատկություններն ալ բավական գրավիչ կդարձնեին զայն։ Այս ուղղությամբ բնորոշ է այն հանդամանքը, որ բալլադին մեջ Շթեֆան իշխանն է Վարդիկին սպանողը, մինչդեռ իրականության մեջ, պատմական աղբյուրներեն գիտենք, որ Իլիաշն է ոճիրի հեղինակը։ Բայց ժողովուրդի մտայնության մեջ, երկու եղբայրները իրենց արարքներով այնքա՜ն նման էին, որ հավանաբար ժողովուրդը չէ կրցած զանազանել ոճրագործի ինքնությունը։

* * *

Վարդիկները ամբողջ XVI դարու ընթացքին բարձրաստիճան պաշտոններու գլուխը գտնվեցան Մոլտովայի մեջ և ծառայեցին ռումեն իշխաններուն, երբ անոնք հակաթուրքական քաղաքականություն կտանեին։ Այսպիսով, անոնք պայքարեցան Մոլտովայի անկախության համար և իրենց բոլոր ընդունակությունները և երբեմն ալ կյանքը ի սպաս դրին այս վսեմ գաղափարին։ Այս գործունեության անդրադարձումը ժողովուրդի մտայնության մեջ կհանդիսանան գեղեցիկ բալլադները, որոնք շատ տարածվեցան ժողովրդական խավերու մեջ և որոնց մեջ Վարդիկները կներկայանան որպես առաքինի և բարձր բարոյականության տեր անձինք, մինչդեռ թուրքասիրական քաղաքականություն տանողները միայն իրենց հաճույքներուն բավարարմամբ զբաղված են։ Այսպիսով, բացի պատմագիտական գնահատանքեն Վարդիկները գրավեցին նաև ժողովուրդի գնահատանքը և դարձան անոր սիրելի հերոսները։

ВАРДИКИ В СРЕДНЕВЕКОВЫХ РУМЫНСКИХ НАРОДНЫХ ПЕСНЯХ

Д. ГЖРИКЯН (Бухарест)

(Резюме)

В средневековой Молдове проживало немалое число армян. Будучи в основном выходцами из Крыма, они в пределах Молдавского княжества занимались главным образом транзитной торговлей и этим значительно способствовали развитию ряда молдавских городов. В некоторых из них армяне пользовались определенной автономией. Ими был создан новый, так называемый «Молдавский», торговый путь из Львова к северо-западным берегам Черного моря.

Как в Польше, так и в Молдове некоторые из армян занимали высокие административные и дипломатические посты. Из них в средневековой Молдове особенно известна семья Вардиков (или Вардиковичей), отдельные представители которой в XVI в. занимали высокие государственные должности. О значительной роли представителей семьи Вардиков говорит тот факт, что один из них — Петрос Вардик, бывший главнокомандующий войск князя Илиаша — стал героем ряда румынских народных песен-баллад. Анализ одной из них, данный в статье, показывает, что ее герои являются историческими личностями середины XVI в.